ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/98

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.07.2018թ. թիվ 03/26-3/12225-18 գրությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06406394) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի 28.06.2018թ. թիվ 217 և 02.07.2018թ. թիվ 220 գրությունների հիման վրա, 04.07.2018թ. նախաձեռնել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 28.06.2018թ. թիվ 217 և 02.07.2018թ. թիվ 220 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին օրենքով սահմանված կարգով ուղարկվել է էլեկտրոնային եղենակով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը: Կնքված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել օրենքով սահմանված ժամկետներում, որի հետևանքով Ընկերությունը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Սուրեն Միրզոյանը և Լուսինե Սահակյանը:

3. <u>«Վահրադյան Շին» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 04.07.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է, որ Այգավանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Այգավան-Եղեգնավան ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն և զբաղեցրել առաջին տեղը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2018թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 8.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել հրավերով և հայտով սահմանված որակավորման հատկանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.06.2018թ. ժամը 16:40-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն.

- Ընդունել է ի գիտություն, որ «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերով պահանջված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

- Հիմք ընդունելով «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ նշված մասնակցի որակավորման չափանիշները գնահատել է բավարար:

- Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, որոշել է ընտրված մասնակից ճանաչել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին:

Սույն թվականի հունիսի 12-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծն էլեկտրոնային եղանակով տրամադրել է Ընկերությանն՝ առաջարկելով սահմանված ժամկետում ստորագրել դրանք և ներկայացնել Պատվիրատուին:

Այնուհետև՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, այն է՝ 21.06.2018թ., «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին է ներկայացրել (գրավոր՝ առձեռն) ՀՀ Արարատի մարզի Այգավան-Եղեգնավան ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների իրականացման պայմանագրի նախագծի 2 օրինակը և պայմանագրի կատարման ապահովումը, սակայն չստանալով որևէ արձագանք, դիմել է Այգավանի համայնքապետարանի ղեկավարին և խնդրել տալ տեղեկատվություն Ընկերության հետ պայմանագիր կնքելու արդյունքների մասին:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ևս մեկ անգամ, արդեն փոստային առաքման եղանակով կնքված պայմանագրերը ս.թ. հունիսի 25-ին նորից ուղարկել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին, որի մասին ուղեկցական գրությամբ հայտնել է Այգավանի համայնքապետարանի ղեկավարին՝ կից ներկայացնելով փոստային առաքման կտրոնի պատճենը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դիտավորությամբ անտեսելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից թե թղթային, թե փոստային առաքման տարբերակով

ներկայացրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը՝ 28.06.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4.1 արձանագրության 1-ին կետով որոշել է՝

«Քանի որ հաղթողին՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրել է էլեկտրոնային եղանակով և կատարվել է պատշաճ ձևով 12.06.2018թ. էլեկտրոնային եղանակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը»:

Որպես Բողոքի իրավական հիմքեր, Ընկերությունը վկայակոչել է հետևյալ նորմերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Այսպիսով՝ Ընկերությունը, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (13.06.2018-26.06.2018թթ. ներառյալ) նախ՝ 21.06.2018թ. թղթային առձեռն, իսկ այնուհետև՝ 25.06.2018թ. թղթային փոստային առաքման միջոցով, ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումն օրենքով սահմանված կարգով ներկայացրել է Պատվիրատուին, սակայն գնահատող հանձնաժողովը 28.06.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4.1 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն իբրև թե չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը: Հատկանշական է, որ նշված որոշմամբ գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչվել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետը, որի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց: Մինչդեռ, նախ տվյալ փուլում խոսքը գնում է Օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով պայմանագիր կնքելու գործընթացի մասին, այլ ոչ թե մասնակցին վերոհիշյալ ցուցակում ներառելու մասին: Եվ երկրորդ, վկայակոչված փաստերը հստակ ապացուցում են, որ Ընկերությունը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց: Ավելին, բոլոր հնարավոր թույլատերի եղանակներով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է Պատվիրատուին, սակայն Պատվիրատուն՝ անտեսելով վերոհիշյալը, որոշել է զրկել Ընկերությանը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի պահանջները, ինչը հանգեցրել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի պայմանագիր կնքելու՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքի խախտմանը:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

դադարեցնել 28.06.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4.1 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացրած որոշումները:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը 13.07.2018թ. ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն համապատասխան հարցում է ներկայացրել «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին:

Ընկերությունը 01.08.2018թ. գրությամբ հայտնել է, որ քանի որ մինչ այդ օրը չի ստացվել «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին կատարված հարցման պատասխանը, ուստի կարելի է ենթադրել, որ ծրարը Այգավանի համայնքապետարանը չի ստացել այն պատճառով, որ ծրարի վրա գրված է եղել՝ Արարատի մարզ, Այգևան համայնքապետարան՝ Լուսինե Սահակյանին, այնինչ պետք է լիներ՝ Արարատի մարզ, Այգավան համայնքապետարան՝ Լուսինե Սահակյանին:

Ընկերությունը գտնում է, որ առկա մեկ տառի անհամապատասխանությունը չէր կարող Այգավանի համայնքապետարանի կողմից հիմք հանդիսանար այն չստանալու և համապատասխանաբար ծրարը ետ վերադարձնելու համար, քանի որ Արարատի մարզում չկա նմանատիպ անվանմամբ մեկ այլ համայնքապետարան, իսկ Լուսինե Սահակյանը հանդիսանում է Այգավանի համայնքապետարանի գնումների համակարգողը»:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրել էր նույնաբովանդակ դիրքորոշում՝ դարձյալ ընգծելով, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն՝ խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, չի խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն և չի հրաժարվել պայմանագիրը կնքելուց:

Ընկերությունը ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.07.2018թ. թիվ 03/26-3/12225-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի 28.06.2018թ. թիվ 217 և 02.07.2018թ. թիվ 220 գրությունները, «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.05.2018թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2, 01.06.2018թ. ժամը 16:40-ին տեղի ունեցած նիստի թիվ 3, 28.06.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությունները, Բողոքներ քննող անձի 02.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/75 որոշումը.

Բողոքներ քննող անձը՝ քննելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 04.07.2018թ. ներկայացված բողոքը, թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/75 որոշմամբ բողոքը մերժել է:

Բողոքներ քննող անձի 02.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/75 որոշմամբ արձանագրվել է հետևյալը.

«ԳԲԽ-ԱՄ-2018/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Այգավանի համայնքապետարանի կողմից Այգավանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Այգավան-Եղեգնավան ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2018թ. ժամը 16:40-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին 12.06.2018թ. էլեկտրոնային եղանակով ներկայացվել է պայմանագիր կնքելու, պայմանագրի ապահովում ներկայացնելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել Ընկերության կողմից հաստատված պայմանագիրը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանը, ուսումնասիրելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 04.07.2018թ. բողոքը և կից փաստաթղթերը, Այգավանի համայնքապետարանի 09.07.2018թ. N 236 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի 24.07.2018թ. թիվ 2/3-2645 գրությունը, արձանագրել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արդյունքում կնքվում է պայմանագիր:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում՝ նույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի համաձայն՝

13) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

14) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Այգավանի համայնքապետարանի կողմից Այգավանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Այգավան-Եղեգնավան ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2018թ. ժամը 16:40-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին 12.06.2018թ. էլեկտրոնային եղանակով ներկայացվել է պայմանագիր կնքելու, պայմանագրի ապահովում ներկայացնելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել Ընկերության կողմից հաստատված պայմանագիրը:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 28.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ներկայացրել է

պայմանագրի նախագծի 2 օրինակը և պայմանագրի կատարման ապահովումը և խնդրել է ճշտել և տեղեկացնել Ընկերությանն արդյունքի մասին:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 03.07.2018թ. հայտնել է, որ Ընթացակարգի շրջանակներում բացի այն, որ Ընկերության կողմից ներկայացվել է փաստաթղթային ձևով (առձեռն), Ընկերության կողմից կնքված պայմանագրերը Պատվիրատուին ուղարկվել են սույն թվականի 25-ին (հիմք՝ փոստային առաքման կտրոնը):

Ընկերությանն ուղղված 04.07.2018թ. թիվ 228 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ վերջինիս կողմից կատարված ճշգրտումների արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից 25.06.2018թ. փոստային անդորրագրի վրա նշված ամսաթիվը չի համապատասխանում Ընկերության կողմից ուղարկված փոստային ծանուցման իրական ամսաթվին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

«ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու առաջարկը «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է 12.06.2018թ.:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Տվյալ դեպքում պայմանագիրը ստորագրելու և պայմանագրի ապահովում ներկայացնելու վերջնաժամկետը տասն աշխատանքային օրվա պայմաններում լրանում է 26.06.2018թ. ներառյալ:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն բողոքով պնդել է, որ վերջինիս կողմից պայմանագրի ստորագրված տարբերակը և պայմանագրի ապահովումը սահմանված ժամկետում՝ 25.06.2018թ. փոստային եղանակով ուղարկվել են Պատվիրատուին:

Ընկերությունը ԳԲԽ-ԱՄ-2018/75 բողոքի շրջանակներում ներկայացրել է N 1 փոստային անդորրագիրը, որի վրա որպես ստացող նշված է՝ «Արարատի մարզ, Այգևանի համայնքապետարան, Սահակյան Լուսինե», և առկա է 25.06.2018թ. նշագրումով «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի կնիքը: Միևնույն ժամանակ անդորրագրի վրա նշված է «RR164829795AM» կոդը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 11.07.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/12587-18 գրությամբ դիմել է «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ին և խնդրել հայտնել դիրքորոշում «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած անդորրագրի վերաբերյալ. մասնավորապես՝ արդյոք անդորրագիրը պատշաճ է և համապատասխանում է իրականությանը և արդյոք անդորրագրի մեջ նշված նամակը 25.06.2018թ. ուղարկվել է, թե՝ ոչ:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ն 24.07.2018թ. թիվ 2/3-2645 գրությամբ հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ուղարկված պատվիրված թիվ «RR164829795AM» նամակը, հասցեագրված՝ Արարատի մարզ, Այգևան համայնքապետարան՝ Լուսինե Սահակյանին, ընդունվել է «Հայփոստ Հյուսիս» Փ/Մ Ամրակից թիվ 1907 փոստային բաժանմունքում և 25.06.2018թ. ամսաթվով տրվել է անդորրագիր Ձև-8 գրքից, որը «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ում այլևս չի կիրառվում:

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ն նշված գրությամբ հայտնել է, որ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի փոստի փոխանակման և տեսակավորման կենտրոնից նշված առաքանին 03.07.2018թ. ուղարկվել է Արարատի մարզի Այգավանի թիվ 0604 փոստային բաժանմունք: Պատվիրված թիվ «RR164829795AM» նամակը Այգավանի թիվ 0604 փոստային բաժանմունքից 07.07.2018թ. վերադարձվել է «Թերի հասցե» նշագրումով: Այգևան համայնքը գտնվում է Արմավիրի մարզում:

Թիվ «RR164829795AM» պատվիրված նամակը 12.07.2018թ. ստացվել է Ստեփանավանի 1901 փ/բ և նույն օրը հանձնվել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 25.06.2018թ. համապատասխան նամակն ուղարկվել է թերի հասցեով, որի հետևանքով Պատվիրատուն չի ստացել «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագրի՝ Ընկերության կողմից ստորագրված տարբերակը ու պայմանագրի ապահովումը, արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տաս աշխատանքային օրվա ընթացում չի ներկայացվել ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 04.07.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ, թեև «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 25.06.2018թ. համապատասխան նամակն ուղարկվել է թերի հասցեով, ինչի հետևանքով Պատվիրատուն չի ստացել Ընթացակարգի պայմանագրի՝ Ընկերության կողմից ստորագրված տարբերակը և պայմանագրի ապահովումը, այդուհանդերձ,

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը՝ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում կոնկրետ գործողություններ է իրականացրել իր կողմից ստորագրված պայմանագրի օրինակը Պատվիրատուին ներկայացնելու նպատակով, այն է՝ թղթային առձեռն, իսկ այնուհետև՝ փոստային առաքման միջոցով, ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը ներկայացրել է Պատվիրատուին, ինչի մասին վկայում է նաև «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի կողմից 24.07.2018թ. թիվ 2/3-2645 գրությունը, որով վերջինս հավաստում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ուղարկված պատվիրված նամակը 25.06.2018թ. ընդունվել է «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի համապատասխան փոստային բաժանմունքում, այսինքն, Ընկերության կողմից չի դրսևորվել պայմանագիրը կնքելուց հրաժարվելուն ուղղված վարքագիծ, հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.07.2018թ. թիվ 03/26-3/12225-18 գրությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06406394) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**